

# Արագածոտնի մարզպետը քաղաքացիներին ընդունելություն է կազմակերպում տարածաշրջաններում

13.03.2015

Մարզպետ Սարգիս Սահակյանը, ի լրումն մարզպետարանում կայացվող քաղաքացիների ընդունելությունների, մարտ ամսին ընդունելություն է կատարում նաեւ մարզի տարածաշրջաններում: Սահմանված ժամանակացույցի համաձայն, մարտի 12-ին ընդունելություն կազմակերպվեց Թալինի տարածաշրջանի բնակիչների համար, որն անցկացվեց Թալինի քաղաքապետարանում: Համայնքապետերի միջոցով բնակիչները տեղեկացել էին ընդունելության օրվա մասին և նախապես դիմումներ էին ներկայացել: Այդուհանդերձ, ընդունելության եկան նաև չհերթագրված բնակիչներ: Մասնակիցների ընդհանուր թիվը 35-եր: Բնակիչների ներկայացրած խնդրահարույց հարցերը ունեին դրամական աջակցության, աշխատանքային, բնակարանային, անձնական բնույթ: Ներկայացված հարցերին տրվեց դրական լուծում: 31 դիմումատու ստացավ դրամական աջակցություն: Մարտի 19-ին մարզպետը քաղաքացիների ընդունելություն կկատարի Ապարանի քաղաքապետարանում, մարտի 26-ին՝ Ծաղկահովիտի համայնքապետարանում: